Էկոնոմիկայի
Նախարարություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր[1]

Օժանդակության տրամադրման հայտ

պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, բորսայում ցուցակման և շրջանառության համար

1. Հայտատուի տվյալները

1. Հայտատուի անվանումը	կազմակերպության լրիվ անվանումը
2. Գործադիր մարմնի ղեկավար	Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն
3. ՀՎՀՀ	
4. Պետական գրանցման հասցե	
5. Հեռախոսահամար	
6. Էլ. փոստի հասցե	

2. Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման[2] համար օժանդակության տրամադրում

Տեղեկացնում ենք, որ Ձեր հայտը ենթակա է մերժման՝ տեղեկատվության բացակայության, թերի կամ սխալ լինելու պարագայում:

[1] ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր):

[2] Սահմանված է Որոշման Հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով:

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման գործընթացի ավարտից հետո շահառուին տրամադրվում է մեկանգամյա օժանդակություն՝ տեղաբաշխման անվանական արժեքի 2 տոկոսի (2%) չափով, սակայն ոչ ավելի, քան 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամը:

Ստորագրելով սույն հայտը՝ Դուք հավաստում եք Ձեր համապատասխանությունը օժանդակության տրամադրման հետևյալ պայմաններին.

1. ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություն եք,
2. Ծրագրի ուժի մեջ մտնելուց հետո ցուցակել եք պարտատոմսեր ՀՀ-ում գործունեություն իրականացնող ֆոնդային բորսայում,
3. Ցուցակված պարտատոմսերն արտահայտված են դրամով, թողարկվել են առնվազն 36 ամիս շրջանառության ժամկետով, տեղաբաշխվել են հրապարակային առաջարկի միջոցով և ունեն շուկա ստեղծող,
4. Դուք և Ձեր հետ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձինք նախկինում չեք դիմել Ծրագրի շրջանակներում պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն ստանալու համար,
5. Չեք հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպություն, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձ կամ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք» օրենքի իմաստով ընդերքօգտագործող:
6. Մինչև սույն ծրագրով օժանդակության հայտ ներկայացնելը միացել եք Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին:

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

2.1. Տվյալներ պարտատոմսերի վերաբերյալ

1.	Տեսակը և դասը	
2.	Տարբերակիչ ծածկագիրը	
3.	Տեղաբաշխված ծավալը	ՀՀ դրամ
4.	Տեղաբաշխված քանակը	հատ
5.	Պարտատոմսերի անվանական արժեք	ՀՀ դրամ
6.	Թողարկման ամսաթիվը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
7.	Մարման ամսաթիվը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
8.	Տեղաբաշխման սկիզբը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
9.	Տեղաբաշխման ավարտը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
10.	Տեղաբաշխող կազմակերպությունը	
11.	Արժեկտրոնի եկամտաբերությունը	%
12.	Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	
13.	Ֆոնդային բորսայի անվանումը	
14.	Ֆոնդայի բորսայի ցուցակը կամ հարթակը (որտեղ պարտատոմսը ցուցակված է)	

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

15. Ցուցակման ամսաթիվը 01/01/2026
օր/ամիս/տարեթիվ

16. Ֆոնդային բորսայի կողմից պարտատոմսին շնորհված հապավումը

17. Պարտատոմսերի շուկա ստեղծող(ներ)ը

2.2. Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. Հայտատու իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի քաղվածքը, կանոնադրությունը:
2. Պարտատոմսը ցուցակելու մասին Ֆոնդային բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշումը:
3. Շուկա ստեղծողի հետ կնքած պայմանագիր(եր)ը:
4. Հայտատու իրավաբանական անձի ներկայացուցչի (հայտը ստորագրողի) անձը հաստատող փաստաթուղթը:
5. Հայտատու իրավաբանական անձի ներկայացուցչի՝ իրավաբանական անձի անունից հանդես գալու լիազորությունը հաստատող փաստաթղթերը:
6. Հայտատու իրավաբանական անձի հետ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով փոխկապակցված իրավաբանական անձանց ցանկ՝ հաստատված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից:
7. Տեղաբաշխումը ներդրումային ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող անձի կողմից կատարվելու դեպքում՝ վերջինիս հետ կնքված պայմանագիրը:
8. Հայտատուի մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի Հրամանով հաստատված կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու վերաբերյալ:
9. Հայտում ներկայացված տեղեկատվությունը հավաստող այլ փաստաթղթեր:

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

3. Պարտատոմսերի շրջանառության օժանդակություն[3]

Տեղեկացնում ենք, որ Ձեր հայտը ենթակա է մերժման՝ տեղեկատվության բացակայության, թերի կամ սխալ լինելու պարագայում:

Պարտատոմսերի շրջանառության համար տեղաբաշխման անվանական ծավալի երեքական տոկոսի (3%) չափով օժանդակություն առաջին երեք (3) տարիների համար, սակայն ոչ ավելի, քան 45,000,000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամը շրջանառության յուրաքանչյուր 12 ամիսների համար:

Այս բաժինը լրացնում եք, եթե Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ստացել եք սույն հայտի 1-ին կետով նախատեսված օժանդակությունը և դիմում եք շրջանառության օժանդակությունն ստանալու համար:

3.1. Տվյալներ պարտատոմսերի վերաբերյալ

Թողարկման ամսաթիվը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
Հայտը ներկայացնելու ամսաթիվը	01/01/2026 օր/ամիս/տարեթիվ
Ֆոնդային բորսայի կողմից պարտատոմսին շնորհված հապավումը	արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	

[3] Սահմանված է Որոշման Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով:

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

		Ամսաթիվ
Յուրաքանչյուր արժեկտրոնի վճարման վերաբերյալ տեղեկատվությունը (վճարման չափերը և ամսաթվերը)		

3.2. Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի վերաբերյալ

Հրամանով սահմանված հայտարարագրի ներկայացման ժամկետի վրա հասած լինելու դեպքում Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի հղումը՝ հրապարակված հայտատուի պաշտոնական կայքէջում:

հղումը

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

Ընտրել այն շրջանառության տարին, որի համար դիմում եք.

○ ա) 1-ին տարի	Այս կետով հայտը ներկայացնելու համար թողարկման ամսաթվից պետք է անցած լինի 12 ամիս
○ բ) 2-րդ տարի	Այս կետով հայտը ներկայացնելու համար թողարկման ամսաթվից պետք է անցած լինի 24 ամիս
○ գ) 3-րդ տարի	Այս կետով հայտը ներկայացնելու համար թողարկման ամսաթվից պետք է անցած լինի 36 ամիս

3.3. Կցված փաստաթղթերի ցանկը

Արժեկտրոնի վճարումների՝ սահմանված պարբերականությամբ կատարումը հավաստող փաստաթղթեր:

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ.

1. Դուք ունեք **3 ամիս** ժամանակահատված շրջանառության յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ օժանդակություն ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար:
2. Լրացված հայտը և կից փաստաթղթերը, Էկոնոմիկայի նախարարությանը հասցեագրված դիմումով անհրաժեշտ է էլեկտրոնային եղանակով ուղարկել secretariat@mineconomy.am էլ. փոստի հասցեին:
3. Սույն հայտի բոլոր էջերը ենթակա են ստորագրման:
4. Հարցերի համար կարող եք դիմել Էկոնոմիկայի նախարարություն՝ 011 597 143 հեռախոսահամարով:

3.4. Լրացուցիչ նշումներ

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____

Հայտարարություն

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ, ոչ ամբողջական ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության: Պարտավորվում եմ վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում այդ մասին 2-օրյա ժամկետում տեղեկացնել Էկոնոմիկայի նախարարությանը:

Թույլատրում եմ Էկոնոմիկայի նախարարությանը հայտում ներկայացված տեղեկատվությունը ստուգելու նպատակով հարցումներ կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, Կենտրոնական բանկին, բանկերին, այլ անձանց և ստանալ հայտատուի հայտում ներկայացված տեղեկատվության ճշտությունը և իսկությունը ստուգող ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն, այդ թվում՝ օրենքով պահպանվող գաղտնիք (բանկային, առևտրային և այլն) համարվող:

Թույլատրում եմ Էկոնոմիկայի նախարարությանը, ըստ անհրաժեշտության, հրապարակել ընկերության կողմից օժանդակության ստացման վերաբերող տվյալներ՝ ընկերության անվանումը և ստացված պետական օժանդակության չափը:

Տալիս եմ իմ համաձայնությունը՝ Էկոնոմիկայի նախարարության կողմից պահպանելու և մշակելու սույն հայտով և կից փաստաթղթերով ներկայացված իմ անձնական տվյալները՝ այդ թվում նույնականացող տվյալները, փոխկապակցված անձանց վերաբերյալ տվյալները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական բանկից, բանկերից, այլ անձանցից սույն հայտով և կից փաստաթղթերով ներկայացված տվյալների ճշտությունը ստուգելու նպատակով:

Հայտատուի ներկայացուցիչ (պաշտոն, անուն ազգանուն)՝ _____

Ստորագրություն՝ _____

Լրացման օր/ամիս/տարեթիվ՝ _____

Հայտատուի ներկայացուցչի ստորագրություն _____